Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, ՏԻՄ-երի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝ բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակիչներին, թե ՏԻՄ-երն ինչպե՞ս են արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2022թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022- 2026թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Համայնքի 2022թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- ✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
- ✓ Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,
- ✓ Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը,
- ✓ Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ,
- ✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,
- ✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը,
- ✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- ✓ Համայնքի բյուջեի միջեցների հաշվին պահպանվող հիմնարկներում նախատեսվել է 152 աստիքային միավոր , կրթության կազմակերպման համար նախատեսվել է 258.151.000 հազ ՀՀ դրամ գումար,որից աշխատավարձի ֆանդ՝146.557.000 ՀՀդրամ՝ թափուր պաշտոններ չկան :

Համայնքի 2022թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2022թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ